ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի քիմիայի (10 դասաժամ ըստ դասաբաշխման) ուսուցչի թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.Դիմում (Ձև1), լուսանկար՝ 3x4 չափի

2.Անձը հաստատող փաստաթուղթ

3. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

5. Ինքնակենսագրություն (Ձև5)

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:

8.Հրատարակված հոդվածների ցանկամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

9.Որկավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև <u>սեպտեմբերի 12-ը</u> ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2023թ սեպտեմբերի 15-ին
ժամը 14:00-ին ՀՀ Տավուշի Գետահովիտի միջնակարգ դպրոցում.
Հասցեն՝ գ. Գետահովիտ, 1-ին փողոց, շենք 21:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 40 97 09